## Ծառայությունների և կապիտալի ազատ տեղաշարժ

### *1. Բանկային համակարգ*

### Ներածություն

Բանկային համակարգի բնագավառում ՀՀ օրենսդրությունը հիմնականում համապատասխանում է ԵՄ օրենսդրության պահանջներին: Բանկային համակարգի բնագավառում Եվրամիության օրենսդրությունը կարգավորում է ֆինանսական ինստիտուտների հիմնադրման և ծառայությունների մատուցման ազատության, վարկային կազմակերպությունների կառուցվածքի և գործունեության, բանկերի հաշվապահական հաշվառման, ավանդների երաշխավորման համակարգերի, վճարահաշվարկային համակարգի, ֆինանսական գործառնությունների, ներդրումների հետ կապված խնդիրները: Նշված խնդիրները Հայաստանի Հանրապետությունում կարգավորվում են «Բանկերի և բանկային գործունեության մասին»[1], «Վարկային կազմակերպությունների մասին»[2], «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին»[3], «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին»[4], «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին»[5], «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին»[6], «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին»[7], «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին»[8] ՀՀ օրենքներով և այլ նորմատիվ իրավական ակտերով:

Ստորև ներկայացված է «Բանկային համակարգ» ենթագլխի բաժինների նկարագրությունը:

Ֆինանսական ինստիտուտների հիմնադրման և ծառայությունների մատուցման ազատության վերաբերյալ Եվրամիության օրենսդրությունը կարգավորում է ֆինանսական գործիքների շուկաների և վարկային կազմակերպությունների գործունեության հետ կապված իրավահարաբերությունները: Հիմք ընդունելով համեմատական վերլուծության արդյունքները՝ պետք է նշել, որ ֆինանսական ինստիտուտների հիմնադրման և ծառայությունների մատուցման ազատության վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը ձևական առումով չի համապատասխանում ԵՄ պահանջներին, մասնավորապես, ՀՀ օրենսդրությունում բացակայում է միասնական իրավական ակտ, որը կարգավորում է բանկերի, վարկային կազմակերպությունների և արժեթղթերի շուկայում գործող այլ ներդրումային կազմակերպությունների գործունեությունը նույն օրենքի շրջանակներում: Այնուամենայնիվ, բովանդակային առումով շատ դրույթներ համապատասխանում են ԵՄ օրենսդրության պահանջներին:

Վարկային կազմակերպությունների գործունեության և կառուցվածքի վերաբերյալ ԵՄ օրենսդրությունը կարգավորում է վարկային կազմակերպությունների վերակազմավորման և լուծարման, կապիտալի համարժեքության խնդիրների հետ կապված իրավահարաբերությունները: Հիմք ընդունելով համեմատական վերլուծության արդյունքները՝ կարելի է եզրակացնել, որ չնայած ՀՀ-ում առկա է վարկային կազմակերպությունների վերակազմավորման և լուծարման մասին օրենսդրություն, սակայն այն չի ներառում ԵՄ-ի կողմից պահանջվող նորմերի մի մասը: Ներդրումային ընկերությունների և վարկային կազմակերպությունների կապիտալի համարժեքության վերաբերյալ օրենսդրությունը մասամբ է համապատասխանում: Վերջինս կապված է ՀՀ-ում ֆինանսական ածանցյալ գործիքների շուկայի թերզարգացվածության հետ:

Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների հաշվապահության վերաբերյալ Եվրամիության օրենսդրությունը կարգավորում է բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների տարեկան հաշիվների, ինչպես նաև օտարերկրյա վարկային և ֆինանսական կազմակերպությունների տարեկան հաշիվների հետ կապված իրավահարաբերությունները: ՀՀ տարածքում գործող բանկերի հաշվապահական հաշվառման համար նախատեսված օրենսդրությունը հիմնականում համապատասխանում է ԵՄ պահանջներին: ԵՄ-ում գործում է առանձին օրենսդրական ակտ, որը կարգավորում է ԵՄ անդամ երկրներում հաստատված և դրանց տարածքից դուրս գլխամասային գրասենյակ ունեցող վարկային կազմակերպության մասնաճյուղերի կողմից տարեկան հաշվապահական փաստաթղթերի ներկայացման մեխանիզմը: ՀՀ-ում նման իրավական ակտի բացակայությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ-ն ԵՄ անդամ չէ:

---

[1] ՀՕ-68, 30.06.1998թ.:
[2] ՀՕ-359, 29.05.2002թ.:
[3] ՀՕ-82, 06.07.2000թ.:
[4] ՀՕ-150, 24.11.2004թ.:
[5] ՀՕ-262, 06.11.2001թ.:
[6] ՀՕ-142, 24.11.2004թ.:
[7] ՀՕ-13, 14.12.2004թ.:
[8] ՀՕ-135, 24.11.2004թ.:

Ավանդների երաշխավորման համակարգերի վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը չնայած մի շարք դրույթներով համապատասխանում է ԵՄ նորմերի պահանջներին, այնուամենայնիվ անհամապատասխանություն կա երաշխավորվող ավանդների գումարի չափի հետ և կարող է անհամապատասխանություն լինել նաև ԵՄ-ում սահմանված հաշվարկների կարգի հետ:

Վճարահաշվարկային համակարգերի վերաբերյալ ԵՄ օրենսդրությունը կարգավորում է էլեկտրոնային վճարների, վճարման վերջնահաշվարկի հետ կապված խնդիրները: Հինվելով համեմատական վերլուծության արդյունքների վրա՝ պետք է ընդգծել, որ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը հիմնականում համապատասխանում է ԵՄ օրենսդրության պահանջներին: Զգալի տարբերություններ կան կապված այն հանգամանքի հետ, որ ՀՀ օրենսդրությունում անվճարունակությանն առնչվող ընթացակարգերը մանրամասնեցված չեն, ինչպես ԵՄ-ում: Տարբերություններ կան նաև օրենքում օգտագործված սահմանումների մեջ:

Ֆինանսական գործառնությունների վերաբերյալ ԵՄ օրենսդրությունը կարգավորում է փողի լվացման, միջսահմանային վարկային փոխանցումների, վճարների ուշացման, ֆինանսական ծառայությունների տարածական պայմանագրերի հետ կապված խնդիրներ: Հիմք ընդունելով համեմատական վերլուծության արդյունքները՝ պետք է նշել, որ ֆինանսական գործառնությունների վերաբերյալ ՀՀ օրենսդրությունում բացակայում են իրավական ակտեր, որոնք կարգավորում են ֆինանսական ծառայությունների մարկետինգը, եվրոյով միջսահմանային վճարները: Փողերի լվացման վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը հիմնականում համապատասխանում է ԵՄ նորմերի պահանջներին: Անհամապատասխանությունները հիմնականում կապված են ձևակերպումների տարբերությունների հետ: Միջսահմանային վարկային և դրամական փոխանցումների վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը հիմնականում չի համապատասխանում ԵՄ նորմերի պահանջներին: Վերջինս պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ-ն ԵՄ անդամ չէ:

Ներդրումների վերաբերյալ Եվրամիության օրենսդրությունը կարգավորում է խնդիրներ՝ կապված ներդրումային ծառայությունների, ինչպես նաև կոլեկտիվ ներդրումային ընկերությունների հետ: Հիմք ընդունելով համեմատական վերլուծության արդյունքները՝ կարելի է եզրակացնել, որ ներդրումների վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը չի համապատասխանում ԵՄ նորմերի պահանջներին: Անհամապատասխանության կարևոր պատճառ է նաև այն, որ ՀՀ օրենսդրությունում չկան իրավական ակտեր, որոնք վերաբերում են բոլոր տեսակի ներդրումային կազմակերպություններին, և այն հիմնականում կենտրոնացված է ուղղակի ներդրումների հարցերի շուրջ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է «Բանկային համակարգ» ենթագլուխը 2007-2009թթ. ընթացքում ամբողջովին համապատասխանեցել ԵՄ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

**2007 թվական**

Կարևորելով բանկային համակարգի գործունեության ընդհանուր կարգավորումը՝ Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի օրենսդրությունը կհամապատասխանեցվի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 1994թ. մայիսի 30-ի թիվ 94/19/ԵՀ դիրեկտիվին[9]:

Մասնավորապես, տվյալ բնագավառում ՀՀ օրենսդրությունը Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 1994թ. մայիսի 30-ի թիվ 94/19/ԵՀ դիրեկտիվի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով փոփոխություններ և լրացումներ կկատարվեն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքում՝ ավանդների երաշխավորման իրավահարաբերությունների կարգավորման նպատակով:

Բանկային համակարգի բնագավառի ՀՀ օրենսդրությունը կհամապատասխանեցվի նաև Եվրոպական խորհրդի 1993թ. մայիսի 10-ի թիվ 93/22/ԵՏՀ դիրեկտիվին և Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2004թ. ապրիլի 21-ի թիվ 2004/39/ԵՀ դիրեկտիվին[10]:

Արժեթղթերի բնագավառում ինվեստիցիոն ծառայությունների վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը Եվրոպական խորհրդի 1993թ. մայիսի 10-ի թիվ 93/22/ԵՏՀ դիրեկտիվի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով լրացումներ և փոփոխություններ կկատարվեն «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքում և «Արժեթղթերի շուկայի կարգավորման կանոնագրքում ՀՀ արժեթղթերի հանձնաժողովի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու և չեղյալ համարելու մասին» ՀՀ արժեթղթերի հանձնաժողովի որոշման մեջ:

Ֆինանսական գործիքների շուկաների վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2004թ. ապրիլի 21-ի թիվ 2004/39/ԵՀ դիրեկտիվի պահանջներին

[9] 1994թ. մայիսի 30-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ թիվ 94/19/ԵՀ՝ «Ավանդների երաշխավորման սխեմաների վերաբերյալ»:

[10] 1993թ. մայիսի 10-ի Եվրոպական խորհրդի դիրեկտիվ թիվ 93/22/ԵՏՀ՝ «Արժեթղթերի բնագավառում ինվեստիցիոն ծառայությունների վերաբերյալ» և,2004թ. ապրիլի 21-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ թիվ 2004/39/ԵՀ՝ «Ֆինանսական գործիքների շուկաների վերաբերյալ»:

համապատասխանեցնելու նպատակով փոփոխություններ և լրացումներ կկատարվեն «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին», «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքներում և «Արժեթղթերի շուկայի կարգավորման կանոնագրքում ՀՀ արժեթղթերի հանձնաժողովի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու և չեղյալ համարելու մասին» ՀՀ արժեթղթերի հանձնաժողովի որոշման մեջ:

**2008 թվական**

Բանկային համակարգի բնագավառի ՀՀ օրենսդրությունը կհամապատասխանեցվի նաև Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2000թ. մարտի 20-ի թիվ 2000/12/ԵՀ, Եվրոպական խորհրդի 1991թ. հունիսի 10-ի թիվ 91/308/ԵՏՀ և Եվրոպական խորհրդի և Խորհրդարանի 2001թ. ապրիլի 4-ի թիվ 2001/24 դիրեկտիվներին[11]:

Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորման նպատակով «Բանկերի և բանկային գործունեության մասին» և «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքներում կկատարվեն փոփոխություններ և լրացումներ՝ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2000թ. մարտի 20-ի թիվ 2000/12/ԵՀ դիրեկտիվի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով:

Փողի լվացման հետ կապված խնդիրների իրավական կարգավորման հետ կապված՝ օրենսդրությունը կհամապատասխանեցվի Եվրոպական խորհրդի 1991թ. հունիսի 10-ի թիվ 91/308/ԵՏՀ դիրեկտիվի պահանջներին: Մասնավորապես, փոփոխություններ և լրացումներ կկատարվեն «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում:

Վարկային կազմակերպությունների վերակազմավորման և լուծարման իրավահարաբերությունների կարգավորման նպատակով, համապատասխան փոփոխություններ և լրացումներ կկատարվեն «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքում՝ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2001թ. ապրիլի 4-ի թիվ 2001/24/ԵՀ դիրեկտիվի պահանջներին համապատասխան:

**2009 թվական**

ՀՀ օրենսդրության համապատասխանեցման համար հիմք կհանդիսանա 2002թ. սեպտեմբերի 23-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 2002/65/ԵՀ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 1998թ. մայիսի 19-ի թիվ 98/26/ԵՀ, 1993թ. մարտի 15-ի Եվրոպական խորհրդի թիվ 93/6/ԵՏՀ և Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 1997թ. հունվարի 27-ի թիվ 97/5/ԵՀ դիրեկտիվները[12]:

Ֆինանսական ծառայությունների տարածական մարքեթինգի հետ կապված օրենսդրական դաշտը ՀՀ օրենսդրությունում ամբողջովին բաց է: Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2002թ. սեպտեմբերի 23-ի թիվ 2002/65/ԵՀ դիրեկտիվի պահանջներին համապատասխան՝ կմշակվի «Հաճախորդների ֆինանսական ծառայությունների տարածական մարքեթինգի մասին» ՀՀ օրենքի նախագիծ:

Վճարահաշվարկային համակարգի և վճարի վերջնահաշվարկի հետ կապված իրավահարաբերությունները Եվրամիության Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 1998թ. մայիսի 19-ի թիվ 98/26/ԵՀ դիրեկտիվի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով փոփոխություններ և լրացումներ կկատարվեն «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» և «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքներում:

Ինվեստիցիոն ընկերությունների և վարկային կազմակերպությունների կապիտալի համարժեքության հետ կապված՝ ՀՀ օրենսդրության համապատասխանեցման նպատակով կմշակվի ինվեստիցիոն ընկերությունների և վարկային կազմակերպությունների կապիտալի համարժեքության հարցերը կարգավորող համապատասխան իրավական ակտեր:

Միջսահմանային վարկային փոխանցումների հետ կապված իրավահարաբերությունների կարգավորման նպատակով Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 1997թ. հունվարի 27-ի թիվ

[11] 2000թ. մարտի 20-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ թիվ 2000/12/ԵՀ՝ «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորման մասին»,1991թ. հունիսի 10-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 91/308/ԵՏՀ «Ֆինանսական համակարգը փողի լվացման նպատակով օգտագործելու արգելման մասին», 2001թ. ապրիլի 4-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ թիվ 2001/24/ԵՀ՝ «Վարկային կազմակերպությունների վերակազմավորման և լուծարման մասին»:

[12] 2002թ. սեպտեմբերի 23-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ թիվ 2002/65/ԵՀ՝ «Հաճախորդների ֆինանսական ծառայությունների տարածական մարքեթինգի մասին», 1998թ. մայիսի 19-ի ՝ «Արժեթղթերի վճարահաշվարկային համակարգի և վճարի վերջնահաշվարկի մասին» Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 98/26/ԵՀ դիրեկտիվ, 1993թ. մարտի 15-ի «Ինվեստիցիոն ընկերությունների և վարկային կազմակերպությունների կապիտալի համարժեքության մասին» Եվրոպական խորհրդի թիվ 93/6/ԵՏՀ դիրեկտիվ, հունվարի 27-ի «Միջսահմանային վարկային փոխանցումների վերաբերյալ» Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 97/5/ԵՀ դիրեկտիվ

97/5/ԵՀ դիրեկտիվի պահանջներին համապատասխան՝ փոփոխություններ և լրացումներ կկատարվեն «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքում:

*1.1.Օրենսդրական համապատասխանեցում*

| 0 | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|---|
| NN ը/կ | Միջոցառում | ԵՄ իրավական աղբյուր | Պատասխանատու մարմին | Ներկայացման ժամկետ | Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր) | Տեխնիկական աջակցություն |
| | | | *2007* | | | |
| 1. | «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում | 1994թ. մայիսի 30-ի «Ավանդների երաշխավորման սխեմաների վերաբերյալ» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 94/19/ԵՀ դիրեկտիվ | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն (ՀՀ կենտրոնական բանկի մասնակցությամբ) | 1-ին եռամսյակ | 27 | Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն |
| 2. | • «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում<br>• «Արժեթղթերի շուկայի կարգավորման կանոնագիրք»-ում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում | 1993թ. մայիսի 10-«Արժեթղթերի բնագավառում ինվեստիցիոն ծառայությունների մասին» Եվրոպական խորհրդի թիվ 93/22/ԵՏՀ դիրեկտիվ | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն (ՀՀ կենտրոնական բանկի մասնակցությամբ) | 3-րդ եռամսյակ | 84 | Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն |
| 3. | • «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում<br>• «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում<br>• «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում<br>• «Արժեթղթերի շուկայի կարգավորման կանոնագրքում ՀՀ արժեթղթերի հանձնաժողովի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու և չեղյալ համարելու մասին» ՀՀ արժեթղթերի հանձնաժողովի որոշման մեջ փոփոխություններ և | 2004թ. ապրիլի 21-ի «Ֆինանսական գործիքների շուկաների մասին» Եվրոպական պառլամենտի և խորհրդի թիվ 2004/39/ԵՀ դիրեկտիվ | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն (ՀՀ կենտրոնական բանկի մասնակցությամբ) | 4-րդ եռամսյակ | 162 | Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի մշակում | | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | 273 | |
| *2008* | | | | | | |
| 4. | • «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքում, փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում<br>«Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում, փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում | 2000թ. մարտի 20-ի «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորման մասին» Եվրոպական պառլամենտի և խորհրդի թիվ 2000/12/ԵՀ դիրեկտիվ | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն (ՀՀ կենտրոնական բանկի մասնակցությամբ) | 2-րդ եռամսյակ | 153 | Խորհրդատվություն |
| 5. | «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում | 1991թ. հունիսի 10-ի «Ֆինանսական համակարգի փողի լվացման նպատակով օգտագործելու արգելման մասին» թիվ Եվրոպական խորհրդի թիվ 91/308/ԵՏՀ դիրեկտիվ | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն (ՀՀ կենտրոնական բանկի մասնակցությամբ) | 2-րդ եռամսյակ | 21 | Նախնական փորձաքննություն |
| 6. | «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում | 2001թ. ապրիլի 4- ի «Վարկային կազմակերպությունների վերակազմավորման և լուծարման» մասին Եվրոպական խորհրդի և պռլամենտի թիվ 2001/24 դիրեկտիվ | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն (ՀՀ կենտրոնական բանկի մասնակցությամբ) | 2-րդ եռամսյակ | 42 | Նախնական փորձաքննություն |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | 216 | |
| *2009* | | | | | | |
| 7. | «Հաճախորդների ֆինանսական ծառայությունների տարածական մարկետինգի մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում | 2002թ. սեպտեմբերի 23-ի «Հաճախորդների ֆինանսական ծառայությունների տարածական մարկետինգի» վերաբերյալ Եվրոպական պառլամենտի և խորհրդի թիվ 2002/65/ԵՀ դիրեկտիվ | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն (ՀՀ կենտրոնական բանկի մասնակցությամբ) | 1-ին եռամսյակ | 36 | Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն, |
| 8. | «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և | 1998թ. մայիսի 19-ի ՝ «Արժեթղթերի վճարահաշվարկային համակարգի և վճարի | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն (ՀՀ կենտրոնական | 1-ին եռամսյակ | 36 | Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն, |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | փոփոխություններ «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ | վերջնահաշվարկի մասին» Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 98/26/ԵՀ դիրեկտիվ | բանկի մասնակցությամբ) | | | |
| 9. | • «Ինվեստիցիոն ընկերությունների և վարկային կազմակերպությունների կապիտալի համարժեքության մասին» Կենտրոնական բանկի խորհրդի որոշման նախագծի մշակում | 1993թ. մարտի 15-ի «Ինվեստիցիոն ընկերությունների և վարկային կազմակերպությունների կապիտալի համարժեքության մասին» Եվրոպական խորհրդի թիվ 93/6/ԵՏՀ դիրեկտիվ | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն (ՀՀ կենտրոնական բանկի մասնակցությամբ) | 1-ին եռամսյակ | 150 | Խորհրդատվություն |
| 10. | «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ | Հունվարի 27-ի «Միջսահմանային վարկային փոխանցումների վերաբերյալ» Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 97/5/ԵՀ դիրեկտիվ | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն (ՀՀ կենտրոնական բանկի մասնակցությամբ) | 1-ին եռամսյակ | 36 | Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | 258 | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | 747 | |

*1.2.Ինստիտուցիոնալ կարողություններ*

| 0 | 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|---|
| NN ք/կ | Հաստատություն | Վերակազմակերպում | Վերապատրաստման կարիքներ | Տեխնիկական աջակցության կարիքներ |
| 1. | • ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն<br>• ՀՀ կենտրոնական բանկ | - | Ավանդների երաշխավորման սխեմաների վերաբերյալ դասընթաց (5 օր / 2007թ.) | Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն |
| 2. | • ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն<br>• ՀՀ կենտրոնական բանկ | | Արժեթղթերի բնագավառում ինվեստիցիոն ծառայությունների մասին դասընթաց (7 օր/ 2007 թ.) | Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն |
| 3. | • ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն<br>• ՀՀ կենտրոնական բանկ | | Ֆինանսական գործիքների շուկաների մասին դասընթաց (4 օր/2007 թ.) | Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն |
| 4. | • ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն<br>• ՀՀ կենտրոնական բանկ | | Ֆինանսական համակարգի փողի լվացման նպատակով օգտագործելու արգելման մասին (5 օր / 2008թ.) | Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն |
| 5. | • ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն<br>• ՀՀ կենտրոնական բանկ | | Հաճախորդների ֆինանսական ծառայությունների տարածական մարկետինգի մասին (5 օր / 2009թ.) | Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն |
| 6. | • ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն<br>• ՀՀ կենտրոնական բանկ | - | Ինվեստիցիոն ընկերությունների և վարկային կազմակերպությունների կապիտալի համարժեքության մասին դասընթացներ (5 օր / 2009թ.) | Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն |
| 7. | • ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն<br>• ՀՀ կենտրոնական բանկ | - | Միջսահմանային վարկային փոխանցումների վերաբերյալ դասընթացներ (5օր/ 2009թ.) | Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն |

## 2. Ապահովագրություն

### Ներածություն

Ապահովագրության բնագավառում ՀՀ օրենսդրությունը չի համապատասխանում ԵՄ օրենսդրության պահանջներին: ԵՄ օրենսդրությամբ նախատեսված զգալի թվով իրավական ակտեր ընդհանրապես բացակայում են ՀՀ օրենսդրությունում: Ապահովագրության բնագավառում Եվրամիության օրենսդրությունը կարգավորում է ծառայությունների մատուցման ազատության, ապահովագրական ընկերությունների, տրանսպորտի ապահովագրության, կյանքի ապահովագրության և ոչ կյանքի (մարդկային գործունեության հետ կապված այլ ոլորտներ) ապահովագրության հետ կապված խնդիրները: Նշված խնդիրները Հայաստանի Հանրապետությունում կարգավորվում են «Ապահովագրության մասին» ՀՀ օրենքով[13], ինչպես նաև ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հրամանով՝ «Ապահովագրական ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլանը», «Ապահովագրական ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլանի կիրառման մասին» հրահանգը և «Ապահովագրական ընկերությունների տարեկան (միջանկյալ) ֆինանսական հաշվետվությունների ձևերը և դրանց լրացման մասին հրահանգը հաստատելու մասին»[14], որոնք ամբողջապես չեն նախատեսում Եվրամիության օրենսդրական պահանջները:

Ապահովագրության ոլորտում ծառայությունների ազատության հետ կապված ԵՄ օրենսդրությունը հիմնականում կարգավորում է ապահովագրական միջնորդությանը վերաբերող խնդիրները: Դրանք վերաբերում են ապահովագրական միջնորդության սահմանմանը, ապահովագրող և վերաապահովագրող միջնորդների գրանցմանը, մասնագիտական կարողություններին, միջնորդների կողմից հաճախորդներին տրամադրվելիք տեղեկատվությանը, վեճերի կարգավորմանը: Հիմք ընդունելով համեմատական վերլուծության արդյունքները՝ պետք է նշել, որ ՀՀ-ում թեև «Ապահովագրության մասին» ՀՀ օրենքը ներառում է որոշ նորմեր, որոնք կարգավորում են այս ոլորտը, այնուամենայնիվ, ԵՄ օրենսդրությամբ պահանջվող նորմերի մեծ մասը բացակայում է ՀՀ օրենսդրությունում:

Ապահովագրական ընկերությունների վերաբերյալ ԵՄ օրենսդրությունը կարգավորում է խնդիրներ՝ կապված ապահովագրական ընկերությունների հաշվապահական հաշիվների, ապահովագրական ընկերությունների կառավարման, ապահովագրական ընկերությունների լուծարման ու վերակազմավորման, վարկային ապահովագրության արտահանման հետ: Նշված ոլորտները ԵՄ օրենսդրությունում կարգավորվում են առանձին դիրեկտիվներով: Հիմք ընդունելով համեմատական վերլուծության արդյունքները՝ կարելի է եզրակացնել, որ թեև ՀՀ օրենսդրությունը կարգավորում է ապահովագրական ընկերությունների հաշվապահական հաշիվներին վերաբերող խնդիրները, սակայն կան զգալի տարբերություններ կապված այն փաստի հետ, որ ՀՀ օրենսդրությունում ներկայացված ապահովագրական ընկերությունների հաշվապահական հաշիվների ակտիվներում և պասսիվներում նախատեսված ենթակետերը տարբեր են ԵՄ օրենսդրությամբ նախատեսված ակտիվի և պասսիվի ենթակետերից: Ապահովագրական ընկերությունների կառավարմանը, լուծարմանը և վերակազմավորմանը վերաբերող ՀՀ օրենսդրությունն առանձին նորմերի միջոցով ներկայացված է «Ապահովագրության մասին» ՀՀ օրենքում, սակայն ԵՄ օրենսդրությամբ նախատեսված նորմերի մեծ մասը բացակայում է: Վարկերի արտահանման ապահովագրությանը վերաբերող ՀՀ օրենսդրությունը ամբողջությամբ բացակայում է:

Տրանսպորտի ապահովագրությանը վերաբերող ԵՄ օրենսդրությունը կարգավորում է իրավահարաբերություններ, որոնք ընդգրկում են ավտոմեքենաների հետ կապված քաղաքացիական պարտավորությունների ոլորտը, օդանավերի և օդաչուների ապահովագրության հիմնախնդիրները: Ավտոմեքենաների ապահովագրությանը վերաբերող ՀՀ օրենսդրությունն առայժմ բացակայում է, իսկ օդանավերի և օդաչուների ապահովագրությանը վերաբերող ՀՀ օրենսդրությունը կարիք ունի զգալի լրացումների:

Կյանքի ապահովագրությանը վերաբերող ԵՄ օրենսդրությունը վերաբերում է ինչպես առանձին անհատների, այնպես էլ մարդկանց խմբերի ապահովագրությանը: Օրենսդրությունը հստակորեն տարանջատում է ապահովագրվողի ստանձնած պարտավորությունները այլ պարտավորություններից: Այս ոլորտում ՀՀ օրենսդրությունը բացակայում է: ՀՀ օրենսդրության մեջ կյանքի և ոչ կյանքի ապահովագրության ոլորտները տարանջատված չեն:

Կյանքի հետ չկապված ապահովագրության ոլորտում Եվրամիության օրենսդրությունը կարգավորում է խնդիրներ, որոնք վերաբերում են ապահովագրության հետ կապված իրավական

---

[13] ՀՕ-99, 11.06.2004թ.:
[14] ՀՀԳՆԱՏ 1999/5 23.04.1999թ.:

ծախսերին, վարկային ապահովագրությանը: Այս ոլորտում նույնպես ՀՀ օրենսդրությունը ամբողջովին բացակայում է:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է «Ծառայությունների ազատ տեղաշարժ» ենթագլուխը մինչև 2009 թվականը ամբողջովին համապատասխանեցնել ԵՄ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

**2006 թվական**

Ապահովագրության բնագավառում ՀՀ օրենսդրությունը կհամապատասխանեցվի Եվրոպական խորհրդի 1991թ. դեկտեմբերի 19-ի՝ թիվ 91/674/ԵՏՀ դիրեկտիվին[15]:

Մասնավորապես, տվյալ բնագավառում կկատարվեն փոփոխություններ և լրացումներ «Ապահովագրական ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլանը», «Ապահովագրական ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլանի կիրառման մասին հրահանգը» և «Ապահովագրական ընկերությունների տարեկան (միջանկյալ) ֆինանսական հաշվետվությունների ձևերը և դրանց լրացման մասին հրահանգը հաստատելու մասին» ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հրամանում կամ դրա հիման վրա մշակված համապատասխան իրավական ակտում՝ ապահովագրական ընկերությունների հաշվապահական հաշիվների հետ կապված ՀՀ օրենսդրությունը Եվրոպական խորհրդի 1991թ. դեկտեմբերի 19-ի՝ թիվ 91/674/ԵՏՀ դիրեկտիվի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով:

Ապահովագրության բնագավառի ՀՀ օրենսդրությունը կհամապատասխանեցվի 2002թ. դեկտեմբերի 9-ի՝ թիվ 2002/92/ԵՀ, 2001թ. մարտի 19-ի՝ թիվ 2001/17/ԵՀ, Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2002թ. նոյեմբերի 5-ի՝ թիվ 2002/83/ԵՀ դիրեկտիվներին, Խորհրդի 1987թ. հունիսի 22-ի՝ թիվ 87/344/ԵՏՀ դիրեկտիվին և Խորհրդի 1992թ. հունիսի 18-ի՝ թիվ 92/49/ԵՏՀ երկրորդ դիրեկտիվին[16]:

Ապահովագրական միջնորդության վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը կհամապատասխանեցվի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2002թ. դեկտեմբերի 9-ի՝ թիվ 2002/92/ԵՀ դիրեկտիվի պահանջներին: Ապահովագրական ընկերությունների լուծարման և վերակազմավորման հետ կապված օրենսդրությունը կհամապատասխանեցվի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2001թ. մարտի 19-ի՝ թիվ 2001/17/ԵՀ դիրեկտիվի պահանջներին: Կյանքի հետ չկապված ապահովագրության բնագավառի ՀՀ օրենսդրությունը կհամապատասխանեցվի Խորհրդի 1992թ. հունիսի 18-ի՝ թիվ 92/49/ԵՏՀ երկրորդ դիրեկտիվի պահանջներին: Այս նպատակներով համապատասխան փոփոխություններ և լրացումներ կկատարվեն «Ապահովագրության մասին» ՀՀ օրենքում:

**2007 թվական**

Ապահովագրական ընկերությունների և խմբերի վերահսկման հետ կապված օրենսդրությունը կհամապատասխանեցվի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 1998թ. հոկտեմբերի 27-ի՝ թիվ 98/78/ԵՀ դիրեկտիվի պահանջներին[17]: Համապատասխան լրացումներ կկատարվեն «Ապահովագրության մասին» ՀՀ օրենքում:

**2008 թվական**

ՀՀ օրենսդրության համապատասխանեցման համար հիմք կհանդիսանան Եվրոպական խորհրդի 1998թ. մայիսի 7-ի թիվ 98/29/ԵՀ դիրեկտիվը և 1973թ. հուլիսի 24-ի թիվ 73/239/ԵՏՀ առաջին դիրեկտիվը[18]:

---

[15] 1991թ. դեկտեմբերի 19-ի Եվրոպական խորհրդի դիրեկտիվ թիվ 91/674/ԵՏՀ՝ «Ապահովագրական ընկերությունների տարեկան և համախմբված հաշիվների վերաբերյալ»:

[16] 2002թ. դեկտեմբերի 9-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ թիվ 2002/92/ԵՀ՝ «Ապահովագրական միջնորդության վերաբերյալ», 2001թ. մարտի 19-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ թիվ 2001/17/ԵՀ՝ «Ապահովագրական ընկերությունների վերակազմավորման և լուծարման վերաբերյալ», 2002թ. նոյեմբերի 5-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ թիվ 2002/83/ԵՀ՝ «Կյանքի ապահովագրության վերաբերյալ», 1987թ. հունիսի 22-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 87/344/ԵՏՀ՝ «Ապահովագրության իրավական ծախսերի հետ կապված օրենքների, կանոնակարգերի և վարչական արարողակարգերի համակարգման վերաբերյալ», 1992թ. հունիսի 18-ի Խորհրդի երկրորդ դիրեկտիվ թիվ 92/49/ԵՏՀ՝ «Կյանքի ապահովագրությունից զատ այլ ուղղակի ապահովագրության հետ կապված օրենքների, կանոնակարգերի վերաբերյալ»:

[17] 1998թ. հոկտեմբերի 27-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ թիվ 98/78/ԵՀ՝ «Ապահովագրական ընկերությունների և ապահովագրական խմբերի լրացուցիչ վերահսկման վերաբերյալ»:

[18] 1998թ. մայիսի 7-ի Եվրոպական խորհրդի դիրեկտիվ թիվ 98/29/ԵՀ՝ «Արտահանման վարկավորման ապահովագրության վերաբերյալ հիմնական արարողակարգի ներդաշնակեցում միջին և երկարաժամկետ կտրվածքի վերաբերյալ», 1973թ. հուլիսի 24-ի Եվրոպական խորհրդի առաջին դիրեկտիվ թիվ 73/239/ԵՏՀ՝ «Ոչ կյանքի ապահովագրության բիզնեսի հետ կապված օրենքների, կանոնակարգերի և վարչական կանոնների համակարգման վերաբերյալ»:

Արտահանման վարկավորման վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը **Եվրոպական խորհրդի 1998թ. մայիսի 7-ի թիվ 98/29/ԵՀ դիրեկտիվի** պահանջներին համապատասխանեցնելու նպատակով կմշակվի «Արտահանման վարկավորման մասին» ՀՀ օրենքի նախագիծ:

Կյանքի հետ չկապված ապահովագրության վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը **Եվրոպական խորհրդի 1973թ. հուլիսի 24-ի թիվ 73/239/ԵՏՀ առաջին դիրեկտիվի** պահանջներին համապատասխանեցնելու նպատակով կմշակվի «Ոչ կյանքի ապահովագրության բիզնեսի մասին» ՀՀ օրենքի նախագիծ:

**2009 թվական**

Ավտոմեքենաների հետ կապված քաղաքացիական պատասխանատվության վերաբերյալ օրենսդրությունը Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 1990թ. մայիսի 14-ի թիվ 90/232/ԵՏՀ և 2000թ. մայիսի 16-ի թիվ 2000/26/ԵՀ դիրեկտիվների [19]պահանջներին համապատասխանեցնելու նպատակով կմշակվի «Ավտոմեքենաների հետ կապված քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության մասին» ՀՀ օրենքի նախագիծ: Այս ոլորտում ինստիտուցիոնալ կարողությունները հզորացնելու նպատակով կկազմակերպվեն խորհրդատվություններ:

[19] 1990թ. մայիսի 14-ի Եվրոպական խորհրդի երրորդ դիրեկտիվ թիվ 90/232/ԵՏՀ՝ «Անդամ երկրներում ավտոմեքենաների հետ կապված քաղաքացիական պարտավորության ապահովագրության օրենքների մոտարկման վերաբերյալ», 2000թ. մայիսի 16-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ թիվ 2000/26/ԵՀ՝ «Անդամ երկրներում ավտոմեքենաների հետ կապված քաղաքացիական պարտավորության ապահովագրության օրենքների մոտարկման վերաբերյալ»:

## *2.1 Օրենսդրական համապատասխանեցում*

| 0 | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|---|
| NN ը/կ | Միջոցառում | ԵՄ իրավական աղբյուր | Պատասխանատու մարմին | Ներկայացման ժամկետ | Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր) | Տեխնիկական աջակցություն |
| *2006* | | | | | | |
| 1. | • «Ապահովագրական ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլանի կիրառման մասին հրահանգը»<br>• «Ապահովագրական ընկերությունների տարեկան (միջանկյալ) ֆինանսական հաշվետվությունների ձևերը և դրանց լրացման մասին հրահանգը հաստատելու մասին» ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշման նախագծի մշակում | 1991թ. դեկտեմբերի 19-ի «Ապահովագրական ընկերությունների տարեկան և համախմբված հաշիվների մասին» Եվրոպական խորհրդի թիվ 91/674/ԵՏՀ դիրեկտիվ | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն (ՀՀ կենտրոնական բանկի մասնակցությամբ) | 4-րդ եռամսյակ | 93 | Խորհրդատվություն |
| 2. | «Ապահովագրության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախգծի մշակում | • 2002թ. դեկտեմբերի 9-ի «Ապահովագրական միջնորդության վերաբերյալ» Եվրոպական խորհրդի և պառլամենտի թիվ 2002/92/ԵՀ դիրեկտիվ<br>• 2001թ. մարտի 19-ի Եվրոպական խորհրդի և պառլամենտի թիվ 2001/17/ԵՀ դիրեկտիվ «Ապահովագրական ընկերությունների վերակազմավորման և լուծարման վերաբերյալ»<br>• 1992թ. հունիսի 18-ի «Կյանքի ապահովագրությունից զատ այլ ուղղակի ապահովագրության հետ | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն (ՀՀ կենտրոնական բանկի մասնակցությամբ) | 4-րդ եռամսյակ | 105 | Խորհրդատվություն |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | կապված օրենքների, կանոնակարգերի վերաբերյալ» Եվրոպական խորհրդի թիվ 92/49/ԵՏՀ երկրորդ դիրեկտիվ<br>• 2002թ. նոյեմբերի 5-ի «Կյանքի ապահովագրության վերաբերյալ» Եվրոպական խորհրդի և պառլամենտի թիվ 2002/83/ԵՀ դիրեկտիվ<br>• 1987թ. հունիսի 22- «Ապահովագրության իրավական ծախսերի հետ կապված օրենքների, կանոնակարգերի և ադմինիստրատիվ արարողակարգերի կոորդինացման վերաբերյալ » Խորհրդի ի թիվ 87/344/ԵՏՀ դիրեկտիվ | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | 198 | |
| *2007* | | | | | | |
| 3. | «Ապահովագրության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում | 1998թ. հոկտեմբերի 27-ի «Ապահովագրական ընկերությունների և ապահովագրական խմբերի լրացուցիչ վերահսկման վերաբերյալ» Եվրոպական խորհրդի և պառլամենտի թիվ 98/78/ԵՀ դիրեկտիվ | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն (ՀՀ կենտրոնական բանկի մասնակցությամբ) | 3-րդ եռամսյակ | 33 | Խորհրդատվություն |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | 33 | |
| *2008* | | | | | | |
| 4. | «Արտահանման վարկավորման մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում | 1998թ. մայիսի 7-ի «Արտահանման վարկավորման ապահովագրության վերաբերյալ հիմնական արարողակարգի միջին և երկարաժամկետ կորվածքով հարմոնիզացման վերաբերյալ» | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն (ՀՀ կենտրոնական բանկի մասնակցությամբ) | 3-րդ եռամսյակ | 36 | Խորհրդատվություն |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Եվրոպական խորհրդի թիվ 98/29/ԵՀ դիրեկտիվ | | | | |
| 5. | « Ոչ կյանքի ապահովագրության բիզնեսի մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում | 1973թ. հուլիսի 24-ի «Ոչ կյանքի ապահովագրության բիզնեսի հետ կապված օրենքների, կանոնակարգերի և վարչական կանոնների կոորդինացման վերաբերյալ » Եվրոպական խորհրդի թիվ 73/239/ԵՏՀ առաջին դիրեկտիվ | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն (ՀՀ կենտրոնական բանկի մասնակցությամբ) | 4-րդ եռամսյակ | 93 | Խորհրդատվություն |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | 129 | |
| *2009* | | | | | | |
| 6. | « Ավտոմեքենաների հետ կապված քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում | 1990թ. մայիսի 14-ի «Անդամ երկրներում ավտոմեքենաների հետ կապված քաղաքացիական պարտավորության ապահովագրության օրենքների մոտարկման վերաբերյալ» Եվրոպական խորհրդի թիվ 90/232/ԵՏՀ երրորդ դիրեկտիվ<br><br>2000թ. մայիսի 16-ի «Անդամ երկրներում ավտոմեքենաների հետ կապված քաղաքացիական պարտավորության ապահովագրության օրենքների մոտարկման վերաբերյալ» Եվրոպական խորհրդի և պառլամենտի թիվ 2000/26/ԵՀ դիրեկտիվ | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն (ՀՀ կենտրոնական բանկի մասնակցությամբ) | 2-րդ եռամսյակ | 30 | Խորհրդատվություն |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | 30 | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | 390 | |

## *2.2 Ինստիտուցիոնալ կարողություններ*

| 0 | 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|---|
| NN<br>ը/կ | Հաստատություն | Վերակազմակերպում | Վերապատրաստման կարիքներ | Տեխնիկական աջակցության կարիքներ |
| 1. | • ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն<br>• ՀՀ կենտրոնական բանկ | - | Վարկային ապահովագրության արտահանման մասին դասընթաց (5 օր / 2008թ.) | Խորհրդատվություն |
| 2. | • ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն<br>• ՀՀ կենտրոնական բանկ | - | Կյանքի ապահովագրությունից զատ այլ ուղղակի ապահովագրության բիզնեսի մասին դասընթաց (5 օր / 2008թ.) | Խորհրդատվություն |
| 3. | ՀՀ կենտրոնական բանկ | - | Ավտոմեքենաների հետ կապված քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության մասին դասընթաց (5 օր / 2009թ.) | Խորհրդատվություն |

### *3. Գործարքներ արժեթղթերով*

**Ներածություն**

Գործարքներ արժեթղթերով բնագավառում ՀՀ օրենսդրությունը, առանձին ոլորտների կարգավորման մասով, ընդհանուր առմամբ համապատասխանում է ԵՄ օրենսդրության պահանջներին, իսկ կարգավորման այլ բնագավառների մասով ԵՄ օրենսդրության համապատասխան իրավական նորմերը կա՛մ բացակայում են ՀՀ օրենսդրության մեջ, կա՛մ էլ դրանց միջև առկա են զգալի անհամապատասխանություններ:

Գործարքներ արժեթղթերով բնագավառում ԵՄ օրենսդրությունը կարգավորում է ներքին տեղեկությունների հրապարակային բացահայտման և գնային չարաշահումների արգելման, արժեթղթի թողարկման ազդագրի հրապարակման և ազդագրում պարտադիր ներառման ենթակա տեղեկությունների, ֆոնդային բորսաներում արժեթղթերի ցուցակման, կոլեկտիվ ներդրումային ինստիտուտների գործունեության, արժեթղթերում ներդրողների փոխհատուցման սխեմաների, ինչպես նաև աշխատանքային կենսաթոշակային ապահովության հետ կապված իրավահարաբերությունները: Նշված խնդիրները Հայաստանի Հանրապետությունում կարգավորվում են «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքով,[20] «Արժեթղթերի շուկայի կարգավորման կանոնագրքում ՀՀ արժեթղթերի հանձնաժողովի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու և չեղյալ համարելու մասին» ՀՀ արժեթղթերի հանձնաժողովի որոշմամբ,[21] «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով,[22] «Ինվեստիցիոն հիմնադրամների մասին» ՀՀ կառավարության թիվ 469 որոշմամբ[23] և այլ նորմատիվ իրավական ակտերով, որոնք, սակայն, ամբողջապես չեն նախատեսում ԵՄ օրենսդրության պահանջները:

Հիմք ընդունելով համեմատական վերլուծության արդյունքները՝ պետք է նշել, որ չնայած ՀՀ օրենսդրությունն արգելում է «ներքին տեղեկությունների» օգտագործումը ցանկացած անձի (ինսայդերի) կողմից, միևնույն ժամանակ նշված տեղեկությունների հրապարակային բացահայտման պահանջ ցանկացած ինսայդերի համար չի նախատեսում: Ըստ էության, ՀՀ համապատասխան իրավական նորմերը լիարժեք չեն կարգավորում ներքին տեղեկությունների հրապարակային բացահայտման հետ կապված խնդիրները, քանի որ նշված տեղեկությունների հրապարակային բացահայտումը նախատեսում են միայն թողարկողների կողմից ՀՀ արժեթղթերի հանձնաժողովին ընթացիկ հաշվետվություններ ներկայացնելու շրջանակներում: «Շուկայի չարաշահումներ» հասկացությունը սահմանելիս ՀՀ օրենսդրությունը սահմանափակվում է միայն գնային չարաշահումների մի քանի մասնավոր դեպքերի սահմանումով և, ըստ այդմ, չի ապահովում շուկայի չարաշահումների այլ հնարավոր դրսևորումների ներառումն այդ սահմանման մեջ:

Արժեթղթերի հրապարակային առաջարկի կամ կարգավորվող շուկայում արժեթղթերն առևտրի ընդունելու դեպքում ազդագրի հրապարակման պահանջի և ազդագրում ներառման ենթակա տեղեկությունների, ինչպես նաև ազդագիրը ներառող գրանցման հայտարարագիրն իրավասու մարմնի կողմից նախապես ստուգելու և գրանցելու պահանջի մասով ՀՀ օրենսդրության համապատասխան նորմերը, ԵՄ օրենսդրության պահանջներին հիմնականում համապատասխանելով հանդերձ, լրիվությամբ չեն նախատեսում ԵՄ օրենսդրության բոլոր պահանջները: Մասնավորապես, ՀՀ օրենսդրությամբ սահմանված չեն ազդագրի պահանջից այն բոլոր բացառությունները, որոնք նախատեսված են ԵՄ օրենսդրությամբ: ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ նաև թողարկողի կողմից ազդագիրն առանձին փաստաթղթերի տրոհելու հնարավորությունը, որի պարագայում ազդագրի հրապարակման վերաբերյալ թողարկողի պարտավորությունը արժեթղթերի նոր թողարկումների դեպքում կարող է սահմանափակվել միայն փոփոխություններ ներառող համապատասխան փաստաթղթի հրապարակումով:

Ֆոնդային բորսաներում արժեթղթերի ցուցակման մասով «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ ֆոնդային բորսայում արժեթղթի ցուցակման համար պետք է նախապես այդ արժեթուղթը գրանցել տվյալ ֆոնդային բորսայում՝ արժեթղթի գրանցման հայտարարագիր ներկայացնելու միջոցով, որի մեջ ներառվող տեղեկություններն էականորեն համընկնում են ազդագրում ներառման ենթակա տեղեկությունների հետ: Ըստ էության, նշված օրենքը, սահմանելով, որ արժեթղթի հետագա ցուցակումը ֆոնդային բորսայում հնարավոր է միայն արժեթղթի գրանցումից հետո, միևնույն ժամանակ ՀՀ արժեթղթերի հանձնաժողովին իրավասություն է վերապահում ներդրողների շահերի պաշտպանության և արժեթղթերի արդար գնագոյացման ապահովման նպատակով իր որոշմամբ սահմանել ֆոնդային բորսաներում արժեթղթի ցուցակման պայմաններ և պահանջներ, որոնք, սակայն, ներկայումս դեռևս սահմանված չեն:

---

[20] ՀՕ-82, 06.07.2000թ.:

[21] ՀՀ արժեթղթերի հանձնաժողովի որոշում, թիվ 392/01, 28.09.2001թ.:

[22] ՀՕ-193, 30.05.2001թ.:

[23] ՀՀ կառավարության որոշում, թիվ 469, 30.09.1994թ.:

Հաշվի առնելով համեմատական վերլուծության արդյունքները՝ պետք է նշել, որ կոլեկտիվ ներդրումային ինստիտուտների վերաբերյալ ներկայումս գործող միակ նորմատիվ իրավական ակտը («Ինվեստիցիոն հիմնադրամների մասին» ՀՀ կառավարության թիվ 469 որոշում) հիմնականում չի համապատասխանում ԵՄ օրենսդրության պահանջներին: Այսպես, նշված որոշմամբ նախատեսվում է միայն կորպորատիվ ինվեստիցիոն հիմնադրամների առկայություն՝ ըստ այդմ բացառելով այլ տեսակի ինվեստիցիոն հիմնադրամների ստեղծման հնարավորությունը (մասնավորապես, պայմանագրային տեսակի ինվեստիցիոն հիմնադրամների): Բացի դրանից, ՀՀ կառավարության թիվ 469 որոշմամբ արգելվում է ինվեստիցիոն հիմնադրամի կողմից իր թողարկած բաժնետոմսերի հետգնումը կամ մարումը (բացառությամբ բաժնետիրական ընկերությունների մասին օրենսդրությամբ նախատեսված դեպքերի), մինչդեռ բաց ներդրումային հիմնադրամների պարագայում նման մեխանիզմը վերջիններիս ամենաբնորոշ առանձնահատկություններից մեկն է:

ՀՀ օրենսդրության մեջ ներկայումս բացակայում են կուտակային կենսաթոշակային ապահովության իրականացման ոլորտը կարգավորող, ինչպես նաև ներդրողների ներդրումների փոխհատուցման սխեմաների վերաբերյալ համապատասխան օրենք կամ այլ իրավական ակտ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է «Գործարքներ արժեթղթերով» ենթագլուխը մինչև 2009 թվականը ամբողջովին համապատասխանեցնել ԵՄ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

**2006 թվական**

Կարևորելով ներքին տեղեկությունների հրապարակային բացահայտման, ինչպես նաև շուկայի չարաշահումների արգելման կապակցությամբ առաջացող իրավահարաբերությունների լիարժեք կարգավորման անհրաժեշտությունը՝ ՀՀ օրենսդրությունը կհամապատասխանեցվի ԵՄ համապատասխան իրավական ակտերի[24] նորմերի պահանջներին: Մասնավորապես, կկատարվեն փոփոխություններ և լրացումներ «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքում՝ ներքին տեղեկությունների հրապարակային բացահայտման պահանջների, շուկայի չարաշահումների սահմանման, ինվեստիցիոն խորհրդատվության արդար տրամադրման և շահերի բախման բացահայտման, գործարար շրջանառության սովորույթների, ապրանքային ածանցյալ արժեթղթերի վերաբերյալ ներքին տեղեկությունների սահմանման, ինսայդերների ցուցակի կազմման, կառավարմանը մասնակցող անձանց գործարքների և կասկածելի գործարքների մասին տեղեկացումների և արժեթղթերի ձեռքբերման ծրագրերի և ֆինանսական գործիքների կայունացման մասով բացառությունների սահմանման վերաբերյալ կարգավորման ամբողջական իրավական դաշտի ձևավորման նպատակով: Խնդրի լուծման բավարար մակարդակ ապահովելու համար անհրաժեշտ կլինի ուժեղացնել համապատասխան ինստիտուցիոնալ կարողությունները՝ այդ նպատակով կազմակերպելով նշված բնագավառներում ԵՄ իրավական կարգավորման առանձնահատկությունների վերաբերյալ դասընթացներ:

**2007 թվական**

Հայաստանի Հանրապետությունում կոլեկտիվ ներդրումային ինստիտուտների ստեղծումն ու գործունեությունը կանոնակարգող իրավական դաշտը ԵՄ համապատասխան իրավական ակտի[25] պահանջներին ամբողջական համապատասխանություն ապահովելու նպատակով կմշակվի «Ինվեստիցիոն հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի նախագիծ: Նշված օրենքի նախագծով կնախատեսվի ինչպես կորպորատիվ, այնպես էլ պայմանագրային ինվեստիցիոն հիմնադրամների ստեղծման և հետագա գործունեության հնարավորություն՝ հաշվի առնելով նշված ինստիտուտների

---

[24] 2003թ. հունվարի 28-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ թիվ 2003/6/EC՝ «Ինսայդերական գործարքների և շուկայի չարաշահումների վերաբերյալ», 2003թ. դեկտեմբերի 22-ի Եվրոպական հանձնաժողովի դիրեկտիվ թիվ 2003/124/EC՝ «Եվրոպական խորհրդարանի և Եվրամիության Խորհրդի 2003թ. հունվարի 28-ի թիվ 2003/6/EC դիրեկտիվը կիրառելու նպատակով ներքին տեղեկությունների հրապարակային բացահայտման և շուկայի չարաշահումների սահմանումների վերաբերյալ», 2003թ. դեկտեմբերի 22-ի Եվրոպական հանձնաժողովի դիրեկտիվ թիվ 2003/125/EC՝ «Եվրոպական խորհրդարանի և Եվրամիության Խորհրդի 2003թ. հունվարի 28-ի թիվ 2003/6/EC դիրեկտիվը կիրառելու նպատակով ինվեստիցիոն խորհրդատվության արդար տրամադրման և շահերի բախման բացահայտման վերաբերյալ», 2003թ. դեկտեմբերի 22-ի Եվրոպական հանձնաժողովի կանոնակարգ թիվ 2273/2003՝ «Եվրոպական խորհրդարանի և Եվրամիության Խորհրդի 2003թ. հունվարի 28-ի թիվ 2003/6/EC դիրեկտիվը կիրառելու նպատակով արժեթղթերի ձեռք բերման ծրագրերի և ֆինանսական գործիքների կայունացման մասով բացառությունների վերաբերյալ», 2004թ. ապրիլի 29-ի Եվրոպական հանձնաժողովի դիրեկտիվ թիվ 2004/72/EC՝ «Եվրոպական խորհրդարանի և Եվրամիության Խորհրդի 2003թ. հունվարի 28-ի թիվ 2003/6/EC դիրեկտիվը կիրառելու նպատակով գործարար շրջանառության սովորույթների, ապրանքային ածանցյալ արժեթղթերի վերաբերյալ ներքին տեղեկությունների սահմանման, ինսայդերների ցուցակի կազմման, կառավարմանը մասնակցող անձանց գործարքների և կասկածելի գործարքների մասին տեղեկացումների վերաբերյալ»:

[25] 1985թ. դեկտեմբերի 20-ի Եվրամիության Խորհրդի դիրեկտիվ թիվ 85/611/EEC՝ «Կոլեկտիվ ներդրումային ինստիտուտների (UCITS) հետ առնչվող օրենքների, կանոնակարգերի և վարչական դրույթների համակարգման վերաբերյալ»:

ստեղծման և հետագա գործունեության բնորոշ առանձնահատկությունների վերաբերյալ ԵՄ օրենսդրությամբ ամրագրված պահանջները:

Համապատասխան փոփոխություններ և լրացումներ կկատարվեն «Արժեթղթերի շուկայի կարգավորման կանոնագրքում ՀՀ արժեթղթերի հանձնաժողովի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու և չեղյալ համարելու մասին» ՀՀ արժեթղթերի հանձնաժողովի որոշման մեջ՝ ըստ այդմ ապահովելով լիարժեք համապատասխանություն «Ֆոնդային բորսաներում արժեթղթերի պաշտոնական ցուցակման ընդունման և հրապարակման ենթակա տեղեկությունների վերաբերյալ» Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2001թ. մայիսի 28-ի թիվ 2001/34/EC դիրեկտիվի պահանջներին: Նշված փոփոխությունների և լրացումների հետևանքով կսահմանվեն ֆոնդային բորսաներում արժեթղթերի ցուցակման վերաբերյալ համապատասխան պայմաններն ու պահանջները, որոնք անհրաժեշտ են ներդրողների շահերի պաշտպանության և արժեթղթերի արդար և թափանցիկ գնագոյացում ապահովելու համար:

Արժեթղթերի հրապարակային առաջարկի կամ կարգավորվող շուկայում արժեթղթերն առևտրի ընդունելու դեպքում ազդագրի հրապարակման վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը ԵՄ համապատասխան իրավական ակտերի[26] պահանջներին ամբողջովին համահունչ դարձնելու նպատակով կկատարվեն համապատասխան փոփոխություններ և լրացումներ «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքում:

**2008 թվական**

Կուտակային կենսաթոշակային ապահովության իրականացման վերաբերյալ ԵՄ օրենսդրության[27] պահանջների համատեքստում կմշակվի «Կուտակային կենսաթոշակային ապահովության մասին» օրենքի նախագիծը, որը կկարգավորի կուտակային կենսաթոշակային ապահովություն իրականացնող ինստիտուտների գործունեության ընթացքում առաջացող իրավահարաբերությունները, մասնավորապես, կենսաթոշակային ապահովություն իրականացնող ինստիտուտների (մասնավորապես, ոչ պետական կենսաթոշակային հիմնադրամների) ստեղծման, դրանց գործունեության արտոնագրման և վերահսկողության, նշված ինստիտուտների կառավարման մարմինների ձևավորման և իրավասությունների, կենսաթոշակային սխեմաների մասնակիցների իրավունքների, կենսաթոշակային սխեմաներում մասնակցության, ինչպես նաև մասնակցության դադարեցման, անհատականացված կենսաթոշակային հաշիվների բացման և վարման, կենսաթոշակային ակտիվների կառավարման և պահառության գործառույթների իրականացման, կենսաթոշակային ակտիվների ներդրման ուղղությունների և քանակային սահմանափակումների, կենսաթոշակային ակտիվների զուտ արժեքի հաշվարկման և հրապարակային բացահայտման, հաշվետվությունների հրապարակման և սահմանված տեղեկությունների բացահայտման, օրենսդրության պահանջների խախտման դեպքերում պատժամիջոցների կիրառման հետ առնչվող խնդիրները:

Հաշվի առնելով արժեթղթերում ներդրումների փոխհատուցման մեխանիզմների ներդրման կարևորությունը՝ որպես արժեթղթերի շուկայում ներդրողների ակտիվության բարձրացման հնարավոր գործիք, կմշակվի «Արժեթղթերում ներդրողների փոխհատուցման սխեմաների մասին» օրենքի նախագիծը:

Նշված օրենքի նախագծի հիմքում կդրվեն ներդրողների փոխհատուցման մեխանիզմների վերաբերյալ ԵՄ համապատասխան իրավական ակտի[28] պահանջները: Մասնավորապես, կսահմանվի արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն իրականացնող անձանց պարտավորությունը ներդրողների փոխհատուցման որևէ սխեմայի պարտադիր անդամակցելու վերաբերյալ: Նշված օրենքի նախագծով կսահմանվեն նաև ներդրողների փոխհատուցման դեպքերը, ներդրողների պահանջի մեծության հաշվարկի, ինչպես նաև փոխհատուցման գումարների վճարման կարգն ու պայմանները, ներդրողների փոխհատուցման սխեմաների անդամությունից բխող պարտավորությունների չկատարման դեպքերում համապատասխան պատժամիջոցները:

Կկազմակերպվի արժեթղթերում ներդրողների փոխհատուցման սխեմաների շրջանակներում կիրառվող հիմնական սկզբունքների և առանձնահատկությունների վերաբերյալ դասընթաց:

---

[26] 2003թ. նոյեմբերի 4-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ թիվ 2003/71/EC՝ «Արժեթղթերի հրապարակային առաջարկի կամ կարգավորվող շուկայում արժեթղթերն առևտրի ընդունելու դեպքում ազդագրի հրապարակման, ինչպես նաև թիվ 2001/34/EC դիրեկտիվում փոփոխություններ կատարելու վերաբերյալ», 1989թ. ապրիլի 17-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 89/298/EEC՝ «Արժեթղթերի հրապարակային առաջարկի դեպքում ազդագրի կազմման, ստուգման և տարածման պահանջների վերաբերյալ»:

[27] 2003թ. հունիսի 3-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ թիվ 2003/41/EC՝ «Աշխատանքային կենսաթոշակային ապահովություն իրականացնող ինստիտուտների գործունեության և վերահսկողության վերաբերյալ»:

[28] 1997թ. մարտի 3-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ թիվ 97/9/EC՝ «Ներդրողների փոխհատուցման սխեմաների վերաբերյալ»:

## *3.1 Օրենսդրական համապատասխանեցում*

| 0 | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|---|
| NN ը/կ | Միջոցառում | ԵՄ իրավական աղբյուր | Պատասխանատու մարմին | Ներկայացման ժամկետ | Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր) | Տեխնիկական աջակցություն |
| | | *2006* | | | | |
| 1. | «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում | 2003թ. հունվարի 28-ի «Ինսայդերական գործարքների և շուկայի չարաշահումների վերաբերյալ» Եվրոպական պառլամենտի և ԵՄ խորհրդի թիվ 2003/6/EC դիրեկտիվ<br><br>2003թ. դեկտեմբերի 22-ի «Եվրոպական պառլամենտի և ԵՄ խորհրդի 2003թ. հունվարի 28-ի թիվ 2003/6/EC դիրեկտիվը կիրառելու նպատակով ներքին տեղեկությունների հրապարակային բացահայտման և շուկայի չարաշահումների սահմանումների վերաբերյալ» Եվրոհանձնաժողովի թիվ 2003/124/EC դիրեկտիվ<br><br>2003թ. դեկտեմբերի 22-ի «Եվրոպական պառլամենտի և ԵՄ խորհրդի 2003թ. հունվարի 28-ի թիվ 2003/6/EC դիրեկտիվը կիրառելու նպատակով ինվեստիցիոն խորհրդատվության արդար տրամադրման և շահերի բախման բացահայտման վերաբերյալ» Եվրոհանձնաժողովի թիվ 2003/125/EC դիրեկտիվ<br><br>2003թ. դեկտեմբերի 22-ի «Եվրոպական պառլամենտի և ԵՄ խորհրդի 2003թ. հունվարի 28-ի թիվ 2003/6/EC դիրեկտիվը կիրառելու նպատակով արժեթղթերի ձեռք | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն (ՀՀ կենտրոնական բանկի մասնակցությամբ) | 4-րդ եռամսյակ | 87 | Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | բերման ծրագրերի և ֆինանսական գործիքների կայունացման մասով բացառությունների վերաբերյալ» Եվրոհանձնաժողովի թիվ 2273/2003 կանոնակարգ<br><br>2004թ. ապրիլի 29-ի «Եվրոպական պառլամենտի և ԵՄ խորհրդի 2003թ. հունվարի 28-ի թիվ 2003/6/EC դիրեկտիվը կիրառելու նպատակով գործարար շրջանառության սովորույթների, ապրանքային ածանցյալ արժեթղթերի վերաբերյալ ներքին տեղեկությունների սահմանման, ինսայդերների ցուցակի կազմման, կառավարմանը մասնակցող անձանց գործարքների և կասկածելի գործարքների մասին տեղեկացումների վերաբերյալ» Եվրոհանձնաժողովի թիվ 2004/72/EC դիրեկտիվ | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | 87 | |
| *2007* | | | | | | |
| 2. | «Ինվեստիցիոն հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում | 1985թ. դեկտեմբերի 20-ի «Կոլեկտիվ ներդրումային ինստիտուտների (UCITS) հետ առնչվող օրենքների, կանոնակարգերի և վարչական դրույթների կոորդինացման վերաբերյալ» ԵՄ խորհրդի թիվ 85/611/EEC դիրեկտիվ | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն (ՀՀ կենտրոնական բանկի մասնակցությամբ) | 2-րդ եռամսյակ | 105 | Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն |
| 3. | «Արժեթղթերի շուկայի կարգավորման կանոնագրքում» (ՀՀ արժեթղթերի հանձնաժողովի որոշում թիվ 392/01, 28.09.2001թ.) փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ արժեթղթերի հանձնաժողովի որոշման նախագծի մշակում | 2001թ. մայիսի 28-ի «Ֆոնդային բորսաներում արժեթղթերի պաշտոնական ցուցակման ընդունման և հրապարակման ենթակա տեղեկությունների վերաբերյալ» Եվրոպական պառլամենտի և ԵՄ խորհրդի թիվ 2001/34/EC դիրեկտիվ | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն (ՀՀ կենտրոնական բանկի մասնակցությամբ) | 2-րդ եռամսյակ | 111 | Նախնական փորձաքննություն |
| 5. | «Արժեթղթերի շուկայի կարգավորման | 2003թ. նոյեմբերի 4-ի «Արժեթղթերի | ՀՀ ֆինանսների և | 4-րդ եռամսյակ | 81 | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում | հրապարակային առաջարկի կամ կարգավորվող շուկայում արժեթղթերն առևտրի ընդունելու դեպքում ազդագրի հրապարակման, ինչպես նաև թիվ 2001/34/EC դիրեկտիվում փոփոխություններ կատարելու վերաբերյալ» Եվրոպական պառլամենտի և ԵՄ խորհրդի թիվ 2003/71/EC դիրեկտիվ<br><br>1989թ. ապրիլի 17-ի «Արժեթղթերի հրապարակային առաջարկի դեպքում ազդագրի կազմման, ստուգման և տարածման պահանջների վերաբերյալ» ԵՄ խորհրդի թիվ 89/298/EEC դիրեկտիվ | էկոնոմիկայի նախարարություն (ՀՀ կենտրոնական բանկի մասնակցությամբ) | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | 297 | |
| *2008* | | | | | | |
| 6. | «Կուտակային կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում | 2003թ. հունիսի 3-ի «Աշխատանքային կենսաթոշակային ապահովություն իրականացնող ինստիտուտների գործունեության և վերահսկողության վերաբերյալ» Եվրոպական պառլամենտի և ԵՄ խորհրդի թիվ 2003/41/EC դիրեկտիվ | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, (ՀՀ կենտրոնական բանկի մասնակցությամբ) | 2-րդ եռամսյակ | 45 | Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն |
| 7. | «Արժեթղթերում ներդրողների փոխհատուցման սխեմաների մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում | 1997թ. մարտի 3-ի «Ներդրողների փոխհատուցման սխեմաների վերաբերյալ» Եվրոպական պառլամենտի և ԵՄ խորհրդի թիվ 97/9/EC դիրեկտիվ | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն (ՀՀ կենտրոնական բանկի մասնակցությամբ) | 4-րդ եռամսյակ | 21 | Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | 66 | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | 450 | |

### *3.2 Ինստիտուցիոնալ կարողություններ*

| 0 | 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|---|
| NN ը/կ | Հաստատություն | Վերակազմակերպում | Վերապատրաստման կարիքներ | Տեխնիկական աջակցության կարիքներ |
| 1. | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ կենտրոնական բանկ) | - | Ներքին տեղեկությունների բացահայտման և գնային չարաշահումների արգելման վերաբերյալ դասընթաց (5 օր / 2006թ.) | Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն |
| 2. | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>ՀՀ կենտրոնական բանկ<br>ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | - | Կուտակային կենսաթոշակային ապահովության համակարգի պետական կարգավորման վերաբերյալ դասընթաց (5 օր / 2008թ.) | Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն |
| 3. | ՀՀ կենտրոնական բանկ<br>ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | - | Արժեթղթերում ներդրողների փոխհատուցման սխեմաների վերաբերյալ դասընթաց (3 օր / 2008թ.) | Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն |

### *4. Ֆինանսական կոնգլոմերատներ*

**Ներածություն**

Ֆինանսական կոնգլոմերատ կազմող վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների և ներդրումային ընկերությունների մասին ՀՀ օրենսդրությունը ամբողջովին բացակայում է: Ֆինանսական կոնգլոմերատների բնագավառում Եվրամիության օրենսդրությունը սահմանում է ֆինանսական կոնգլոմերատ համարվող կազմակերպությունների հասկացությունը, կարգավորում է ֆինանսական կոնգլոմերատների վճարունակության, նույն կոնգլոմերատում գտնվող տարբեր բաժինների ռիսկերի համակենտրոնացման, նշված բնագավառում մասնագիտական որակավորման և կառավարման հետ կապված իրավահարաբերությունները: Նշված խնդիրները Հայաստանի Հանրապետության օրենսդրությունն առայժմ չի կարգավորում:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է «Ֆինանսական կոնգլոմերատներ» ենթագլուխը 2006-2008թթ. ընթացքում ամբողջովին համապատասխանեցնել ԵՄ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

**2008 թվականներ**

Ֆինանսական կոնգլոմերատների գործունեության կարգավորման նպատակով կմշակվի «Ֆինանսական կոնգլոմերատ կազմող վարկային կազմակերպությունների, ապահովագրական և ներդրումային ընկերությունների լրացուցիչ վերահսկողության մասին» օրենքի նախագիծ՝ **Եվրոպական** խորհրդարանի **և Խորհրդի 2002թ. դեկտեմբերի 16-ի՝ թիվ 2002/87/ԵՀ դիրեկտիվի**[29] պահանջներին համապատասխանեցնելու նպատակով:

[29] 2002թ. դեկտեմբերի 16-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ թիվ 2002/87/ԵՀ՝ «Ֆինանսական կոնգլոմերատ կազմող վարկային կազմակերպությունների, ապահովագրական և ներդրումային ընկերությունների լրացուցիչ վերահսկողության մասին»:

*4.1 Օրենսդրական համապատասխանեցում*

| 0 | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|---|
| NN ը/կ | Միջոցառում | ԵՄ իրավական աղբյուր | Պատասխանատու մարմին | Ներկայացման ժամկետ | Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր) | Տեխնիկական աջակցություն |
| *2008* | | | | | | |
| 1. | «Ֆինանսական կոնգլոմերատ կազմող վարկային կազմակերպությունների, ապահովագրական և ներդրումային ընկերությունների լրացուցիչ վերահսկողության մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում | 2002թ. դեկտեմբերի 16-ի «Ֆինանսական կոնգլոմերատ կազմող վարկային կազմակերպությունների, ապահովագրական և ներդրումային ընկերությունների լրացուցիչ վերահսկողության մասին» Եվրոպական Պառլամենտի և Խորհրդի թիվ 2002/87 դիրեկտիվ | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն (ՀՀ կենտրոնական բանկի մասնակցությամբ) | 2-րդ եռամսյակ | 57 | Խորհրդատվություն |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | 57 | |

### *4.2 Ինստիտուցիոնալ կարողություններ*

| 0 | 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|---|
| NN ը/կ | Հաստատություն | Վերակազմակերպում | Վերապատրաստման կարիքներ | Տեխնիկական աջակցության կարիքներ |
| 1. | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ կենտրոնական բանկ | - | Ֆինանսական կոնգլոմերատ կազմող վարկային կազմակերպությունների, ապահովագրական և ներդրումային ընկերությունների լրացուցիչ վերահսկողության վերաբերյալ դասընթաց (5 օր / 2008թ.) | Խորհրդատվություն |